«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ..

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հեղինակ՝ Գևորգյան Հռիփսիկ Սամվելի

ՄԱՐԶ՝ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ N8 հ/դ

.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՁԵԻԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ....

«Զարգացումը կամ գիտությունը ոչ մի մարդու չեն կարող տրվել կամ հաղորդվել: Ամեն ոք, ով ցանկանում է նրանց հետ հաղորդակցվել, պետք է դրան հասնի սեփական գործունեությամբ, սեփական ուժերով, սեփական լարվածությամբ»:

Ա. Դիստերվեգ

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Հասարակագիտությունը լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիարակության, քաղաքացու ձևավորման գործում: Երբ պատանիները բացահայտում են իրենց դերն աշխարհում և խորհում այն բազմաթիվ պարտականությունների ու պատասխանատվության մասին, որոնք պետք է ստանձնեն որպես հասարակության երիտասարդ անդամներ, մանկավարժների պարտականությունն է սատարել նրանց և ուղղորդել՝ ոչ միայն յուրատեսակ օրինակ դառնալով, այլ նաև գործուն և արդյունավետ դասավանդմամբ՝ զարգացնելով պատմության, տնտեսագիտության, մշակույթի, փիլիսոփայության, ազգային արժեքների, քաղաքացիական սկզբունքների և պատասխանատվությունների նրանց ըմբռնումը: Հասարակագիտությունը պետք է օգնի պատանիներին՝ իբրև Հայաստանի քաղաքացիների, տեր դառնալ իրենց իրավունքներին ու պարտականություններին:

Հասարակագիտություն առարկան սահմանում է այն հիմնական նպատակներն ու սովորողներին ներկայացվող պահանջները, որոնց իրականացմանը պետք է նպատակաուղղվի հասարակագիտության դասավանդումը, Այս առումով շատ կարևոր է դասընթացի ուսուցումը կառուցել այնպիսի մեթոդների, գնահատման ձևերի վրա, որոնք համապատասխան են սահմանված նպատակներին: Նպատակները ներառում են գիտելիքների, հմտությունների և արժեքների ուսուցում:

Առարկայի դասավանդման հիմքում պետք է ընկած լինի ուսուցման սովորողակենտրոն մոտեցումը: Այդպիսի ուսուցման դեպքում յուրաքանչյուր սովորող դառնում է դասի գործուն մասնակիցը: Դրա համար կիրառվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: Վերջիններս հնարավորություն են ընձեռում սովորողին պասիվ վիճակից անցնելու ինքնուրույն և խմբերով համատեղ աշխատանքներ կատարողի, գիտելիք ձեռք բերելու գործընթացի գործուն մասնակցի վիճակին: Այս դեպքում դասի կենտրոնում սովորողներն են, ովքեր, ոչ միայն այս կամ այն չափով

յուրացնում են ուսումնական նյութը, այլև այդ ընթացքում ձեռք են բերում ինքնուրույն մտածելու, բանավիճելու, հաղորդակցվելու, միմյանց լսելու, միմյանցից սովորելու և այլ կարևոր կարողություններ ու հմտություններ:

Հետազոտության նպատակը՝

-ձևավորել աշակերտների մոտ դրական վերաբերմունք հասարակագիտություն առարկայի նկատմամբ

-նպաստել սաների ինքնուրույն մտածելու, բանավիճելու, հաղորդակցվելու, միմյանց լսելու, միմյանցից սովորելու և այլ կարևոր կարողությունների ու հմտությունների զարգացմանը

Վերոնշյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. սովորողների հմտությունների, կարողությունների և արժեքների նպատակադրված զարգացում,

2. միջառարկայական մտածողության զարգացում,

3. գիտելիքը սովորողի անձնային որակներ և հմտություններ ձևավորող ու զարգացնող գործիքի վերածելուն

4. ընտրել, մշակել ու համակարգել հասարակագիտություն առարկայի ծրագրային նյութը դյուրին ու գրավիչ դարձնելու միջոցներ ու մեթոդներ սովորողների համար

Առաջարկված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են հետազոտման հետևյալ մեթոդները

. . Ուսումնասիրել տարբեր տարիքային և առանձնահատկություն ունեցող երեխաների կրթական կարիքներն ու հնարավորությունները

. Նկարագրել դասի մատուցման հետաքրքիր հնարներ, որոնք կարող են աշակերտների մոտ դրական վերաբերմունք ձևավորել հասարակագիտություն առարկայի նկատմամբ: .

պարզել

. իրականացնել ,

Սահմանել

, , ապացուցել---

Այսպիսով՝ աշխատանքում ներկայացված հատուկ միջոցները, մեթոդները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները կնպաստեն սովորողների կողմից հասարակագիտություն առարկայի ծրագրային նյութի լիարժեք յուրացմանը, ինչպես նաև կնպաստի դրական վերաբերմունքի ձևավորմանը հասարակագիտություն առարկայի նկատմամբ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մանկավարժական գործընթացում աշակերտը ձևավորվում և զարգանում է ըստ ուսուցչի ծրագրերի այն չափով, ինչ չափով որ վերջինս առաջացնում է և կառավարում նրա ուսումնական գործունեությունը, ոչ թե պարտադրում է՝ անտեսելով աշակերտի կամքն ու ցանկությունը, պահանջմունքներն ու ընդունակությունները։

Այսօր, երբ ամենուրեք գրվում և խոսվում է հումանիստական և համագործակցության մանկավարժությունների, ինտերակտիվ ուսուցման մեթոդների, մանկավարժական բարձր տեխնոլոգիաների և նման այլ բաների մասին, չափազանց կարևորվում է նպատակահարուցումը, առանց որի սովորողը չի կարող դառնալ ուսումնական գործունեության լիարժեք սյուբեկտ: Օրինակ՝ եթե ուսուցիչը որոշել է նպաստել սովորողների հետազոտական կարողությունների ձևավորմանը՝ օգտագործելով դասանյութի հնարավորությունները, ուրեմն տվյալ դասի համար նա պետք է այնպիսի աշակերտական նպատակ ընտրի, հանուն որի սովորողները նախատեսված մտավոր կամ պրակտիկ հետազոտական գործունեության սյուբեկտ դառնան։ Ասենք եթե աշակերտը նկատի, իր համար հարազատ դարձած գաղափարին կամ պատկերացմանը հակասող փաստեր, անհանգստանալու է և ցանկանալու է , այսինքն՝ նպատակադրվելու է պարզել այդ փաստերի էությունը, փրկել իր պատկերացումը կամ փոփոխել այն։ Նման օրինաչափությունը ցույց է տալիս, որ աշակերտի համար ուսուցչի մտածած նպատակը չպետք է նրան ներկայացվի պատրաստի վիճակում, այլ ստեղծվի պայման, որի շնորհիվ էլ կձևավորվի այն սովորողի գիտակցության մեջ։ Միայն այդ դեպքում նպատակը աշակերտի համար կլինի սեփական և իրեն կենթարկի նրա ողջ գործունեությունը:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ուսուցման ժամանակակից տեսությունները համոզիչ կերպով ապացուցում են, որ գիտելիքի փոխանցումը դեռևս սովորեցնել չի նշանակում։ Կառուցողականության տեսության կողմնակիցները (Դյուին, Պիաժեն և Վիգոտսկին) հիմնավորում են, որ իրական ուսուցումը տեղի է ունենում ոչ թե գիտելիքի վերարտադրության, այլ դրա կառուցման միջոցով։ Կառուցողականության ուսմունքի համաձայն՝ յուրաքանչյուր սովորող նոր գիտելիքն ընկալում է արդեն ունեցած փորձի, գիտելիքի հիման վրա։ Եթե ուսուցիչն ուսուցումը կառուցում է միայն գիտելիքի փոխանցման և բոլորին միատեսակ մոտեցում ցուցաբերելու վրա, ապա երբեք չի կարող

հասնել լավ արդյունքի, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի ընկալման առանձնահատկություններ:

Թե՛ հատուկ և թե՛ հանրակրթական դպրոցի մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպես, ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատետրում գրվող անծանոթ բառերի քանակը, որը աշակերտը պետք է սովորի նախքան նոր դաս անցնելը: Տարբերակված ուսուցումը կիրառվել է աշխարհի տարբեր դպրոցների ներառական դասարաններում և հիմնված է Վիգոտսկու §Զարգացման մոտակա գոտու¦ (1978) տեսության վրա, ըստ որի սովորողները լավ են սովորում, երբ տրված հանձնարարությունները մատչելի են, ոչ թե շատ դժվար կամ պարզունակ: Քոֆմանը և Հալահանը (2011) այս մոտեցումը որակում են որպես տեղեկատվությանը «դժվարությամբ տիրապետելու մոտեցում», համաձայն որի, հանձնարարությունները պետք է լինեն դժվար, բայց ոչ խրթին:

Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒՀՁ գործընթացի մի մասը: ՈՒՀՁ-ի ուղղությամբ իրականացված հետազոտությունները վկայում են, որ որոշ սովորողների համար յուրացման չափանիշները կամ ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է սակավ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր: Այսպես, Էդիբբրնը (2007, 2010) ներկայացրել է ուսուցման դժվարություններ ունեցող սովորողներին վերաբերող դեպքեր, ում ուսումնառության արդյունավետությունը բարձրացել է, երբ ուսուցիչները հրաժարվել են դասախոսելու և միայն տպագիր նյութերով դասավանդելու ավանդական ձևից: Նման սովորողների հետ աշխատելիս հատուկ պայմանների և փոփոխություններ մտցնելու կարիքը կարող է նվազել, եթե ուսուցիչը դասը պլանավորելիս ցուցաբերի ճկունություն: Այն դեպքում, երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները վաղօրոք նկատի են առնվում և մատչելի դասավանդումը դրվում է դասի պլանավորման հիմքում՝ բոլորը կարողանում են ավելի լավ սովորել:

Շատ կարևոր է, որպեսզի որևէ նոր բան սովորոցնելիս պարզվի, թե ինչ գիտեն տվյալ թեմայի մասին աշակերտները, կապակցի նոր և արդեն ուսումնասիրված թեմանները:

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Եթե ուսուցումը կառուցողական գործունեությամբ է պայմանավորված, ապա սովորողի ակտիվությունն անհրաժեշտություն է դառնում: Միայն աշակերտների ակտիվ մասնակցության

շնորհիվ կպարզվի , թե ինչ են մտածում սովորողները: Եթե դասի ժամանակ հիմնականում ուսուցիչն է խոսում, ապա հնարավոր չէ պարզել, թէ ինչ են մտածում աշակերտները, ինչքանով են յուրացնում նյութը:

Ակտիվ ուսուցումն առավելապես կարևոր է հասարակագիտության դասընթացում: Պասիվ ուսուցումով հնարավոր չէ դաստիարակել ակտիվ, պատասխանատու, երկրի գործընթացներին մասնակցող քաղաքացի: Քննարկումները, բանավեճերը , ստեղծագործական ազատությունը հասարակագիտության արդիունավետ դասավանդման նախապայմաններից են:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ուսուցման ցանկացած մեթոդը ուսուցչի նպատակասլաց գործողությունների համակարգն է, որոնք կազմակերպում են աշակերտների այնպիսի իմացական և պրակտիկ գործունեությունը, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը նրանց կողմից և դրանով իսկ՝ ուսուցման նպատակների իրականացումը»:

Բազմազան ու խայտաբղետ աշխարհում ապրող երեխայի համար շատ կարևոր է դասերի ժամանակ բազմազանություն ապահովելը: Դասի կազմակերպման ձևը սովորողի համար պետք է նաև անակնկալ լինի: Սովորողի համար տաղտկալի է, երբ նա նախօրոք գիտի դասի ընթացքը, սցենարը: Միօրինակությունը նվազեցնում է ուսման շարժառիթը, դրդապատճառը, խաթարում ստեղծագործական մտածողության զարգացումը: Այդ առումով՝ մեթոդների, հնարների հարուստ զինանոցի կիրառումը կարող է սովորողների համար դասը դարձնել սպասված, բայց նաև անսպասելի , անակնկալ իրադարձություն:

Ուսուցման մեթոդներ և հնարներ: Մանկավարժության մեջ չպետք է լինի մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: ռուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելիս մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մեկ այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

«Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), Ինչու՞... ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներ (ինչու՞ սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով, ուսուցման գործընթացում մեթոդը ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

- ինչպե՞ս հաջող պլանավորել
- ինչպե՞ս հաջող իրականացնել դասը
- ինչպե՞ս կանխատեսել արդյունքները
- ինչպե՞ս հասնել նպատակներին
- ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

Պայմանականորեն դասը կարելի է բաժանել 3 մասի և յուրաքանչյուրի համար կիրառել որոշակի մեթոդներ և հնարներ՝

1. դասի սկիզբ /խթանում/

2. նոր նյութի մատուցում իմաստի ընկալում/

3 սովորածը պարզելու հնարներ / կշռադատում/

1. ԴԱՍԻ ՍԿԻԶԲ Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը

շատ կարևոր է։ Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին

Խթանման փուլի նպատակն է ակտիվացնել սովորողներին, ուշադրությունը կենտրոնացնել դասավանդվող նյութին, տրամադրել և խթանել նրանց հետաքրքրությունները։ Այս փուլում ուսուցչի առջև դրվում են հետևյալ խնդիրները.

5. գրավել աշակերտի ուշադրությունը, շարժել հետաքրքրությունը և ուղղորդել ուշադրությունն ու մտածողությունը տվյալ թեմայի շուրջ,

6. հիշեցնել, վեր հանել նախորդ գիտելիքները,

7. կապել արդեն ունեցած գիտելիքները նորի հետ,

8. գտնել խթանումն իրականացնող արդյունավետ մեթոդներ և հնարներ։

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ՝ ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել։ Ըստ գիտական հետազոտությունների՝ Երեխան մեկ դասի ընթացքումկարող է միջինում սովորել 4-7 բան։

Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը։ Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը։

Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը։ 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը։ Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա։

5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետոանհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը։ Շատ կարևոր է նախադասությունների չափը։ Խորհուրդ է տրվում.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Սովորաբար ընդունված է այն կարծիքը, որ աշակերտները սովորում են ուսուցչից: Այս առումով դասապրոցեսում լավ չի օգտագործվում սովորողների՝ միմյանցից սովորելու հնարավորությունը: Մինչդեռ, երբեմն աշակերտներն իրարից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Հասարակագիտության ուսոցման գործընթացում շատ կարևոր է փոքր խմբերով աշխատելը, ինչը աշակերտներին հնարավորություն է տալիս համատեղ քննարկելու որոշ հիմնահարցեր, զարգացնելու հաղորդակցական, թիմով աշխատելու հմտությունները, սովորելու միմյանցից: Այս որակները ժողովրդավարական հասարակություն կառուցելու հիմնաքարերն են, որոնց ձևավորումը պետք է սկսել հենց դասարանում:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիներից ակնկալվում են ինքնուրույն մտածելու, որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու հմտություններ: Այդ հմտությունների զարգացումը հնարավոր է, եթե ուսուցման ընթացքում աշակերտները ոչ թե պարզապես սերտեն իդեալականորեն շարադրված, պատրաստի լուծումներով նյութերը, այլ քննարկեն և տեսակետներ արտահայտեն միարժեք լուծում չունեցող հիմնահարցերի շուրջ:

Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:

Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: Հետևաբար՝ մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը: Բայց այդպես չէ: Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ և թվականներ հիշելու: Նման տեսակետ արտահայտողները գիտելիքը շփոթում են տեղեկույթի հետ: Google-ն ունի տեղեկույթ: Իսկ գիտելիքն այսօր էլ կարևոր է, քանի որ, ինչպես շատ դիպուկ նշում է ամերիկացի հոգեբան Դանիել Ուիլինգհամը, եթե չկա գիտելիք, ապա ինչի՞

մասին ենք մենք մտածում։ Այլ հարց է, որ պարզապես գիտելիք ունենալը բավարար չէ։ Բայց առանց գիտելիքի մտածելն էլ վտանգավոր է։ Ճիշտ չէ նաև հիշողությունն ու մտածողությունը հակադրելը։ Այս մասին էլ Ուիլինգհամը ասել է. «Մենք հիշում ենք այն, ինչի մասին մտածում ենք»։ Հետևաբար՝ մտածողությունն ու հիշողությունը ոչ թե հակադիր բաներ են, այլ փոխկապակցված։ Անընդունելի են գիտելիքի, հիշողության դերը նսեմացնող մոտեցումները։ Նոբելյան մրցանակակիր Ջեյմս Ուոթսոնը, որը ԴՆԹ հեղափոխության հեղինակներից է, նշում է. «Երբ ես փորձեցի վերլուծել իմ հաջողության պատճառները, հասկացա, որ դա կապված է իմ գիտելիքների հետ։ Ճեղքումների համար պետք են նոր գաղափարներ, բայց դրանց հիմքը գիտելիքներն են։ Իսկ գիտելիքներ ունենալու համար պետք է շատ կարդալ»։

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿՅԱՆՔԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ

Հասարակագիտության ուսուցումը պետք է հիմնվի ազգային և համամարդկային ժառանգության վրա։ Բայց միաժամանակ հասարակագիտության ուսուցումը կարող է արդյունավետ լինել, երբ հիմնվի ժամանակակից կյանքից վերցված օրինակների վրա։ Ի տարբերություն պատմական խնդիրների, ժամանակակից խնդիրները մանկավարժական առումով կարող են անմշակ լինել, բայց դրանց քննարկումը էապես կնպաստի սովորողների ստեղծագործական, քննադատական հմտությունների զարգացմանը։

Եզրակացություն

Հասարակագիտություն առարկան ուսուցիչների առջև դժվար խնդիրներ է դնում: Նրանք պետք է բավարար չափով տիրապետեն ոչ միայն իրենց դասավանդած, այլ դպրոցական ծրագրում ընդգրկված այլ առարկաների ու կարողանան վերլուծել նրանց միջև գոյություն ունեցող բնական և հնարավոր կապերը:

Օգտագործված գրականության ցանկ

Սերգեյ Մանուկյան, Ընդհանուր մանկավարժություն, Երևան 2005

Սերոբ Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014թ.

Ներառական կրթության ռազմավարություններ

https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6% 80.pdf